ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ԳՐՈՂԸ ՀԱՆՑԱՎՈՐ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ՝ 'ԱԲՈՒ ՀԱՅՅԱՆ ԱԼ-ԹԱՈՒՀԻԴԻԻ ԵՎ ՍԱՍԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

10-11-րդ դարերի արաբ հեղինակ, 'ադաբի (1) գրականության մեծ վարպետ, սակայն արդեն կենդանության օրոք անտեսված, լքված ու մոռացված 'Աբու Հայյան ալ-Թաուհիդիին (մոտ.՝ 310/923 – 414/1023թթ.) վիճակված էր պատմություն ոտք դնել՝ իր տրամադրության տակ ունենալով արաբ աշխարհագրագետ, պատմիչ և բանաստեղծ Յակութ ալ-Համաուիի (մահ.՝626/1229 թ.) "երաշխավորագրերը": Դրանց և իր հեղինակության ուժով Յակութը նախ Արևելքի, ապա և աշխարհի համար "վերահայտնագործեց" ալ-Թաուհիդի երևույթը: Իսկ այդպիսով շահած ալ-Թաուհիդիի "գրական անմահության" ամբողջ ընթացքում հենց այդ բնորոշումները դարձան ալ-Թաուհիդիի "այցեքարտը": Արաբական միջնադարյան գրականության ամենամեծ ու հեղինակավոր մատենագիտական բառարանում՝ իր "Ուղեցույցում". Յակութը մասնավորապես այսպես է գրում ալ-Թաուհիդիի մասին. "Սասանի զավակների պարագլուխ", "սուֆիականության շեյխ", "'ադիբների փիլիսոփա և փիլիսոփաների 'ադիբ", "քալամի մուհակկիկ և մուհակկիկների մութաքալիմ", "պերճախոսների իմամ", "եզակի աշխարհում, որին հավասարը չկա" (2):

Ալ-Թաուհիդի անձի և հեղինակի, նրա ճակատագրի ու ձիրքի հետագա ընկալման գրեթե բոլոր փորձերը բխել են այս բնութագրերից, որ նրան տվել է Յակութը, և դրանց մեկնաբանումից: Այսպես "*սուֆիականության* (3) շեյխ" բնութագրությունը, բազմաթիվ մեկնաբանությունների ու թեզիսների տեղիք տալով, այսօր համարվում է գրեթե ապացուցված իրողություն առ այն, որ ալ-Թաուհիդին եղել է սուֆիականության հետևորդ: "*'Ադիբների* (4) փիլիսոփա և փիլիսոփաների 'ադիբ" բնորոշումը ալ-Թաուհիդիի առնչությամբ ամենից հաճախ կիրառվողն է և ամենապարզը. 'Աբու Հայյանը մուսուլման մտավորական էր, ով քաջատեղյակ էր նաև փիլիսոփայությանը: Նաև՝ "*Քալամի* (5) *մուհակկիկ* (6) և մուհակկիկների *մութաքալլիմ* (7)", այսինքն՝ մուսուլմանական դոգմատիկ աստվածաբանության մեծ գիտակ էր և գիտակների մեջ՝ դոգմատիկ աստվածաբանության հետևորդ: "Պերճախոսների *իմամ* (8)", "եզակի աշխարհում, որին հավասարը չկա" բնորոշումներն էլ որպես ոճաբան և պերճախոսության վարպետ աչքի ընկած ալ-Թաուհիդիի նկարագիրն են: Դրանք իրենց հերթին լավագույնս բացատրում են շվեյցարացի արևելագետ Ադամ Մեցի

մեկնաբանություններն ալ-Թաուհիդիի վերաբերյալ: *"...առավել հասարակ ու այդուհանդերձ առավել ուժեղ ու խանդավառ արձակ արաբերեն լեզվով ոչ ոք չի գրել նրանից հետո"*, նա *"այդ ոճի անգերազանցելի վարպետն"* է, ով *"կանգնած է այդ արվեստի գագաթին"* (9):

Սակայն բոլոր աղբյուրներում, հիշատակության պարագայում անգամ, բացակայում է մեկնաբանությունը, թե ինչ կարող է նշանակել "Սասանի զավակների պարագլուխ" բնորոշումը ալ-Թաուհիդիի դեպքում: Թվում է՝ ուսումնասիրողները խուսափել են եզրեր գտնել միմյանցից տրամագծորեն տարբեր այնպիսի հասկացությունների միջև, ինչպիսիք են մուսուլման մտավորականը՝ ի դեմս ալ-Թաուհիդիի և միջնադարի մուսուլմանական հանցավոր աշխարհի ներկայացուցիչները, որոնց անվանում էին նաև "Սասանի զավակներ":

Բուն առնչությունները դուրս բերելուց առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե ալ-Թաուհիդին և Սասանի զավակներն առանձին-առանձին ինչ էին ներկայացնում իրենցից:

Այսպես՝ 'Աբու Հայյան 'Ահմադ իբն 'Աբբաս ալ-Սուֆի ալ-Թաուհիդին ծնվել է 4-րդ/10-րդ դարի առաջին քառորդում չքավոր ընտանիքում ենթադրաբար Բաղդադում: Փայլուն կրթություն է ստացել. նրա ուսուցիչների թվում են եղել ժամանակի ամենահայտնի գիտնականները: Ամբողջ կյանքում իր ապրուստը վաստակել է որպես *քաթիբ*՝ գրագիր, գրիչ (10): Փորձելով բարելավել կեցությունը՝ հովանավորություն է որոնել Ռեյ քաղաքի 3 տարբեր վեզիրների մոտ՝ բոլոր դեպքերում կրելով անհաջողություն. վեզիրները հրաժարվել են ճանաչել ալ-Թաուհիդիի գրական ձիրքը: Ալ-Թաուհիդին 2 տարով ինչ-ինչ հովանավորություն էր գտել Բաղդադում՝ Իբն Սա'դան (մահապատժի է ենթարկվել՝ 375/985-86թթ) վեզիրի մոտ: Դրանից հետո անդառնալիորեն ալ-Թաուհիդիի կյանքի ուղեկիցներն են դարձել լքվածությունը, չքավորությունն ու ստորացուցիչ վիճակը: Մահացել է 4/10-րդ դարի առաջին քառորդում ենթադրաբար Շիրազում: Թողել է 32 անուն գրական գործեր՝ փոքր ծավալների ուղերձներից մինչև մի քանի հատորանոց ֆունդամենտալ աշխատություններ:

Ինչ վերաբերում է Սասանի զավակներին, ապա 'Աբբասյանների խալիֆայության (11) շրջանում, մասնավորապես 9-12-րդ դարերի ընթացքում և հատկապես Իրաքի ու Իրանի տարբեր քաղաքները ողողված էին ապաղասակարգայնացված տարրերով՝ թափառաշրջիկներով, աղքատներով և գող-ավազակներով: Հանցագործ աշխարհը ներկայացնող այդ զանգվածին կոչում էին ընդհանուր *ֆիթյան* ("խարդախ") և *'այյար* ('շրջմոլիկ") անուններով: Իսկ քանի որ դրանց շարքում հանդիպում էին նաև հասարակության բարձր խավերի ներկայացուցիչներ, ապա նրանց երբեմն

հեգնալի անվանում էին "Սասանի զավակներ" (بنو ساسان)՝ իրանական Սասանյան հարստության (224-651թթ.) հիմնադրի անունով: Առասպելը սա բացատրում է այն ավանդությամբ, որի համաձայն Սասանը երիտասարդ տարիքում գահից զրկված լինելով՝ հեռացել է լեռներ՝ քրդերի մոտ, հավաքել է աղքատների ու թափառաշրջիկների մի ամբողջ բանակ և մուրացիկ կյանք է վարել: Այսպես պարսից արքայազնը ակամայից դարձել է գող-ավազակների "անվանադիր նախնի": Արաբական խալիֆայության բնակչության այս շերտը՝ իր բանուգործով ու հասարակության մեջ ունեցած դերով, մոտավորապես նման էր "պրոֆեսիոնալ չքավորներին" միջնադարյան Եվրոպայում (12), նրանց պես էլ համախմբված էին գողերի, ավազակների, չքավորների և այլոց կորպորացիաներում (13): Վերջիններս իրենց շարքերն էին հավաքագրում ոչ-միայն հասարակության "տականքին", այլ նաև ամենատարբեր, այդ թվում և՝ ազգաբնակչության ուսյալ շերտերի ներկայացուցիչների (14), մտավորականների: Այն պարագայում, երբ 10-րդ դարի խալիֆայությունում կյանքի պայմաններն այնքան էլ նպաստավոր չէին ուսյալ մարդու համար, երբ ոչ արաբական ծագումով մեկենաս-տիրակալները հաճախ անտարբեր էին արաբական գրական ավանդույթի հանդեպ կամ գիտական-գրական սալոններում ոչ բոլոր մտավորականներն էին տեղ գտնում, ի հայտ եկավ գրական գործունեությամբ զբաղվող կիսաչքավոր-կիսաշրջմոլիկ ուսյալ անձի տիպը, որը քաղաքից քաղաք էր շրջում և առիթի դեպքում ելույթներ ունենում հասարակական վայրերում: Այս թափառաշրջիկ գրողների շարքում հանդիպում էին ցածր հոգևորականությունից սերող մարդիկ, մուսուլմանական ուսումնական հաստատությունների սաներ, անհաջողակ կամ իրենց տեղը չգտած պաշտոնյաներ, ինչպիսիք էին քաթիբ-գրագիրները:

Սույնով թվում է մասամբ լույս է սփռվում գրագիր 'Աբու Հայյանի և Սասանի զավակների առնչության հարցի վրա. ալ-Թաուհիդին շատ հանգիստ կարող էր լինել այն մտավորականներից, ովքեր ներգրավված էին 'այյարների ու ֆիթյանների շարքերը: Հատկապես այն բանի նկատառումով, որ Սասանի զավակներին թեթև առնչություններ ունեին ալ-Թաուհիդիի որոշ հայտնի ժամանակակիցներ, որոնցից ոմանց հետ 'Աբու Հայյանը անձնապես հարաբերվել էր: Խոսքը մասնավորապես Իբն 'Աբբադ ալ-Սահիբ վեզիրի (մահ.՝ 385/995) մասին է, որը լավ գիտեր փողոցի լեզուն՝ Սասանի զավակների ժարգոնը (*մունաքաթ բանի Սասան*): Ալ-Սահիբ վեզիրի մոտ ալ-Թաուհիդին գրագիր էր աշխատել 978-ից 981-ը և նրանից բաժանվել որպես թշնամի: "Սասանի զավակների պարագլուխ" մականունը, որ նշում է Յակութը, հնարավոր է չարացած վեզիրի պատասխան "շնորհը" լինել ալ-Թաուհիդիին. վեզիրի արքունիքից փախչելուց հետո ալ-Թաուհիդին ըստ

Էության համալրել էր չքավոր, ոչ փնտրված մտավորականների շարքերը: Իր հերթին 'Աբու Հայյանը դարի ամենաշնչավոր վեզիրին և երևելի գրողի համարում ունեցող անձին՝ Իբն 'Աբբադին, ծաղրուծանակի առարկա էր դարձրել իր "Երկու վեզիրների վարքուբարքը" գործում: Դրանում հեղինակը Իբն 'Աբբաղ վեզիրին մեղադրում է բոլոր հնարավոր արատների համար՝ ժլատությունից մինչև արվամոլություն: Նույն ժամանակի գրական շրջանակների մեկ այլ ներկայացուցիչ՝ ճանապարհորդ և գրող 'Աբու Դու'լաֆ ալ-Հազրաջին, ալ-Սահիբ վեզիրի գրական խմբակից էր, Սասանի զավակների արգոյի գիտակ, անգամ նրանց կյանքը լուսաբանող պոեմ էր գրել (15) և ինքն էլ, ըստ որոշ տվյալների, նախատիպ դարձել Բաղի՝ ալ-Զաման ալ-Համադանիի (969-1007) *մակամաների* (16) համար: Մակաման Սասանի զավակների նկատմամբ հետաքրքրության դրսևորում էր՝ գրական նոր ժանրի տեսքով (17): Մակամաների ամենահայտնի գործերում առկա են այդ կորպորացիայի անդամների վարքուբարքին նվիրված կտորներ: Ուշագրավ է, որ ինքը՝ ժանրի հիմնադիր ալ-Համադանին, ուսյալ աղքատ էր (18): Նրա հերոս 'Աբու ալ-Ֆաթհը նս իրենից ներկայացնում է չքավոր միջնադարյան մտավորականի տիպ, որը ստիպված է մուրացկանություն անել, բայց չի իջնում բացեիբաց գողության մակարդակ:

Ե՞րբ և ինչպե՞ս կարող էր ալ-Թաուհիդին առնչվել Սասանի զավակներին: Արդյո՞ք նրան Սասանի զավակ է դարձնում միայն այն հանգամանքը, որ ինչպես մակամաներում է ասվում, խելքը ոչ ոքի պետք չէ այդ դարում. և խելացի, գիտուն 'ադիբը փաստացի ապրում է փողոց ընկած մուրացկանի, "համեստ արվեստագետի" կյանքով:

Այս հարցերի փոքր-ինչ այլ պատասխան են առաջարկում ալ-Թաուհիդիի որոշ գործերում տեղ գտած ակնարկները, միջադեպերի նկարագրությունները: Դրանցից ամենաբնդգրկունը գտնում ենք ալ-Թաուհիդիի "Ժամանց և վայելք" գրքում:

Խալիֆայությունում Բուիների իրանաշիական հարստության (932-1060) տիրապետությունը նշանավորվում էր Բաղդադում գրանցվող անընդհատ հուզումներով և շիա-սունիական բախումներով: 363/974-ի բաղդադյան անկարգությունների ժամանակ ալ-Թաուհիդիի տունը թալանվել է: Ահա թե ինչպես է հիշում ինքը՝ ալ-Թաուհիդին, իր կյանքի ամենադժբախտ օրերից մեկը՝ "Վայելք և ժամանց" գրքում. "Մենք դարձանք մասնակիցներն անցքերի՝ տարօրինակ, արտասովոր, զարմանալի և զազրելի: Մենք դարձանք ավազակների պարագլուխների զոհերը... հարձակումները, ալան-թալանը, հրդեհները հաջորդում էին մեկը մյուսին, այնպես որ Տիգրիսից եկող ջուրը մեզ, նկատի ունեմ՝ ալ-Կարի թաղամաս, այլևս չէր հասնում...

Ավազակները հասան Բայնա ալ-Սուրայն թաղամաս (ալ-Կարխի շրջանում) և հարձակվեցին դրա վրա: Վերցրին ամենը, ինչ կար իմ տանը՝ ոսկի, հագուստ, կահույք և այն ամենը, ինչ հետ էի գցել սև օրվա համար ամբողջ կյանքիս ընթացքում: Նրանք դանակով սրածեցին իմ ստրկուհուն՝ նրանից պահանջելով փող, ինչից և նա մահացավ այդ նույն օրը: Իսկ ես զրկվեցի ամենից, ինչ ուներ" (19):

Իր մեկ այլ "Երկու վեզիրների վարքուբարքը" գրքում, հեղինակը ոմն 'Աբբադանիի առնչությամբ շատ հպանցիկ տալիս է Սասանի զավակների անունը՝ հենց այդ տարբերակով:

Սակայն Յակութի բնութագրին ամենից մոտ տարբերակով, որում Յակութը նրան անվանում է *"մուրացկանություն անողներ Սասանի զավակների պարագլուխ"*, ալ-Թաուհիդին գրում է իր կյանքի վերջին գործը համարվող 'Աբու Սահլ դատավորին հղված ուղերձում: Դրանում պատմում է իր գրքերն այրելու մասին: Եվ ընդամենը մի կետով նշում է. *"ստիպված էի ստորացուցիչ մուրացկանություն անել ազնվականներից ու հասարակ մարդկանցից"* (20):

Պետք է կարծել, որ հենց այս վերջին գործում է հարկավոր որոնել ալ-Թաուհիդի-Սասանի որդիներ առնչության իսկական հետքերը՝ հեղինակի կենսագրության մեջ 400/1009 թվականի ունեցած առանձնահատուկ դերի նկատառումով: Բանն այն է, որ վերոհիշյալ մյուս գործերը գրվել են մինչև 400/1009 թվականը. "Վայելքը և ժամանցը"՝ 373/983-375/386թթ., "Երկու վեզիրների վարքուբարքը"՝ 370/980-381/995թթ.: Նշված ուղերձը թվագրվում է հենց հիջրայի 400 թվականի Ռամադան ամսով/1009-ի ապրիլ-մայիսով: Իսկ 1009 թվականին ալ-Թաուհիդին կտրուկ "կորել է" տարեգրություններից, դոկտոր 'Ահմադի բառերով ասած՝ *"ընդհատվել են նրանից տեղեկությունները ու նրա հետքերը"* (21): Եվ դա այն դեպքում, երբ ուսումնասիրողների մեծամասնության կարծիքով՝ դրանից հետո ալ-Թաուհիդին ապրել է ևս 14 տարի՝ մինչև 1023-ը: Այս դեպքում էլ հարց է առաջանում, թե որտեղ է գտնվել ալ-Թաուհիդին և ինչով է զբաղվել: Այն պարագայում, երբ ընդունված է կարծել, որ 1009-ից հետո ալ-Թաուհիդին ղադարեցրել է գրական գործունեությունը, պետք է ճիշտ համարել դոկտոր Յուսուֆ Զեյդանի այն ենթադրությունը, ըստ որի՝ կյանքի այդ փուլը 'Աբու Հայյան ալ-Թաուհիդին անց է կացրել՝ միանալով սասանցիների խմբի (جماعة الساسانية)՝ մուրացկանություն անելով:

Մնում է միայն հավելել Յակութի այն մանրամասը, թե ալ-Թաուհիդին "պարագլուխ" էր, ոչ հասարակ ավազակ:

Մեկնաբանություններ և հղումներ

1\. 'Ադաբ (ստուգաբանվում է 'D B արմատով, որը նշանակում է *"հրաշալի բան"*, *"հրավեր* [ճաշի]"). միջնադարյան մուսուլմանական գրականության մեջ ամենատարածված ժանրերից մեկը, արաբամուսուլմանական մշակույթի վերելքի ժամանակաշրջանի՝ 8-12-րդ դարերի գրականության հիմնական ժանրը: Բարոյախրատական, աշխարհիկ գրականություն: Ըստ արևմտյան ուսումնասիրողների՝ 'ադաբը համեմատելի է արևմտյան բելետրիստիկա (belles-letters (գոյ. հոգ bel' letter-ից) կամ անգլիականացված bell-letters, թարգմանաբար՝ գեղարվեստական գրականություն) հասկացության հետ:

2\. Յակութի "Ուղեցույցում" ալ-Թաուհիդիի առավել ամբողջական բնորոշումն այսպիսին է. *"Գռեհկալեզու, մուրացկանություն անողներ Սասանի զավակների պարագլուխ, իրեն արված վատությունից ու լավությունից սակավագոհ, պախարակումն է նրա բանը և զրպարտաբանությունը՝ նրա արհեստը, սահմանափակ, աղավաղող, բողոքում է իր ժամանակի վատնումից և իր երկերում արցունք է թափում իր զրկանքի համար... կամենում է միայն զբաղվել մարդկանց պախարակումով, նախատինքով, զրպարտաբանությամբ... սուֆի է՝ իր ուղիով ու կորպորացիայով, եղել է իր մասին մեծ կարծիքի, մարդիկ հաստատ իմացել են նրա հավատը, հմուտ էր բոլոր գիտություններում, նա սուֆիականության շեյխ էր, 'ադիբների փիլիսոփա և փիլիսոփաների 'ադիբ, քալամի մուհակկիկ և մուհակկիկների մութաքալլիմ, պերճախոսների իմամ... եզակի աշխարհում, որին հավասարը չկա"*: (معجم الأدباء- ياقوت الحموي - 15 ج - 5ص - بيروت - 1979)

3\. Սուֆիականություն՝ միստիկ ուղղություն իսլամում, որը 10-11-րդ դարում ոչ միայն ազդեցիկ, այլ նաև նորաձև դարձավ իսլամում, իսկ ամբողջ Միջնադարի ընթացքում հսկայական ազդեցություն ունեցավ մուսուլմանների հոգևոր կյանքի վրա:

4\. 'Ադիբ՝ միջնադարյան մուսուլման մտավորական:

Վ. Բարտոլդը այս առիթով գրում է. *"'Աբու Հայյան ալ-Թաուհիդին համարվում էր, 'ադիբների փիլիսոփա և փիլիսոփաների 'ադիբ, ինչից երևում է, որ 'ադաբի և փիլիսոփայության միջև որոշ մոտիկություն էին տեսնում և միևնույն ժամանակ սկզբունքային տարբերություն"*: (Бартольд, В.В., Сочинения, том VI, Москва, 1966 с. 623) :·

5\. Քալամ՝ մուսուլմանական դոգմատիկ աստվածաբանությունը

6\. *"Պարսկական գրականության մեջ մուհակկիկին հակադրվում է գիտնականն ընդհանրապես՝ դանիշմենդը* [գիտակ, գիտուն – Դ. Վ.]" (Бартольд, В.В., Сочинения, том VI, Москва, 1966, էջ 623). այսպես է Վ. Բարտոլդը բացատրում "մուհակկիկ" հասկացությունը: Տվյալ դեպքում ստացվում է, որ ալ-Թաուհիդին մասնավորապես էր տիրապետում գիտելիքներին, ժամանակակից հասկացության համաձայն՝ մասնագիտացած գիտնական էր:

7\. Մութաքալլիմ՝ քալամի ներկայացուցիչ

8\. Առաջնորդ, վարպետ (արաբ.)

9\. Мец А., "Мусульманский Ренессанс", М., 1972, с. 212

10\. Այդ մասնագիտությունը ինքը ալ-Թաուհիդին անվանում է "դժբախտ մասնագիտություն", զբաղմունք, որը "սպառում է մարդու կյանքն ու տեսողությունը":

11\. Ալ-Աբբասիյուն (կամ բանու ալ-Աբբաս), Աբբասյաններ, խալիֆների՝ ալ-Աբբաս իբն 'Աբդ ալ-Մուտտալիբ իբն Հաշիմի (մահ.՝653թ)՝ Մուհամմադ մարգարեի հորեղբոր անմիջական սերունդների երկրորդ հարստությունը (Ислам, Энциклопедический словарь, с. 6), որն իշխեց 750-1256թթ:

12\. Фильштинский И.М., История Арабской Литературы, X-XVIII века, Москва, 1991, с. 278

13\. Макамы, Абу Мухаммед аль-Касим аль-Харири, М., 1987, с. 8

14\. Фильштинский И.М., История Арабской Литературы, X-XVIII века, М., 1991, с. 278-280

15. Ըստ 'Աբու Դու'լաֆի "Սասանյան կասիդայի"՝ Սասանի զավակները ճգնակացի հագուստ են կրում, տոն օրերին մերկ դուրս են գալիս փողոց, ներկում են իրենց մարմինը՝ հավատացնելու, թե իրենք դիվահար են, ողորմություն են խնդրում՝ ցուցադրելով մարմնի ծայրատվածքներ, մարմնի վրա արհեստական ուռուցքներ են գոյացնում, ձեռքով պոկում և ատամներով կրծում են երկաթ ու ապակի, ուտի պես դաղը բույսեր են ուտում, ծաղրում են ծեր քարոզիչների, իրենց կարիքներն են հոգում մզկիթներում, երբեմն մոգական շնորհքի հավակնություններով՝ մոգական գործողություններ են կատարում, թքում են հիվանդների ու դիվահարների վրա՝ իբր նրանց բուժելու համար, մեզ են լցնում մարդկանց վրա, թալիսմաններ են վաճառում, անպատիժ ծիսական թալան են կատարում՝ քաղցրավենիք հափշտակելուց մինչև "անհավատների" դեմ պատերազմներ, որոնք նրանց հարստացում են խոստանում:

16. Մակամա՝ սրիկայպատում նովելներ, որոնք հանգավոր արձակով, բարդագույն արաբերեն լեզվով ներկայացնում էին ուսյալ, բայց չքավոր հերոսի՝ հաճախ քննադատելի արկածները, որ զարգանում էին տարբեր վայրերում, իրավիճակներում և անձանց հետ գիտելիքի, խարդախության, հնարամտության, կասկածելի այլ հատկանիշների դրսևորումներով:

17. Պահանջարկը սահմանում էր "բարձրաշխարհիկ" հասարակությունը, որը մի տեսակ պաշտամունք էր տածում այդ կիսաքրեական տարրի հանդեպ, մոտավորապես այսպիսին, ինչպիսին այսօր առկա է հայաստանյան հասարակության շրջանում: Այդպիսի ուրույն հետաքրքրությունը, ըստ Ի.Ֆիլշտինսկու, անշուշտ վկայում է միջնադարյան արաբամտավորականական հասարակության ապրած սոցիալական ու հոգևոր ճգնաժամը: Բայց մյուս կողմից ուսյալ խավին զվարճացնում էին գողերի օյիները, նրանց բառապաշարը, արարքները: Գող-ավազակների մասին՝ առատորեն բանաստեղծություններով զարդարուն պատումները, որոնցում խոսվում էր ֆորտունայի անհաստատունության, մարդկային գործերի ու ապավինումների չնչինության ու անարդյունավետության մասին, հաջողությամբ մրցակցում էին արքունի ավանդական գրական "ռեպերտուարի" հետ:

18. Макамы, Абу Мухаммед аль-Касим аль-Харири, М., 1987, с. 3

19. 1953 - القاهرة - ص 161-162 - ج 3- الإمتاع والمؤانسة

20. 2001 - دمشق - ص 130 - - من رسائل أبي حيّان التوحيد يّ - أحمد البّد عزّت الدكتور

21. նույն տեղում, ص 73

22. ؟ هل كان صُوفيّا أو فيلسوفا - أبو حيّان التوحيـــدي - http://www.ziedan.com/research/us4.asp

Օգտագործված գրականություն

1. Фильштинский И.М., История Арабской Литературы, X-XVIII века, Москва, 1991

2. من رسائل أبي حيّان التوحيد يّ - الدكتور عزّت السيّد أحمد – دمشق – 2001

3. Бартольд, В.В., Сочинения, том VI, Москва, 1966

4. Ислам, Энциклопедический словарь

5. 1953 - القاهرة - الإمتاع والمؤانسة

7. Макамы, Абу Мухаммед аль-Касим аль-Харири, М., 1987

8. Classical Arabic Crime Narratives: Thieves and Thievery in Adab Literature, Journal of Arabic Literature, Vol. 19, No. 2 (Sep., 1988)

9. 'Akhlāq al-Wazīrayn: as-Sāhib ibn 'Abbād wa Ibn al-'Amīd, Khalīl al-Mansūr, Beirut, 1997

10. The Mediaeval Islamic Underworld: The Banu Sasan in Arabic Society and Literature, Leiden, 1976

11. ؟ هل كان صُوفيّا أو فيلسوفا - أبو حيّان التوحيـــدي - http://www.ziedan.com/research/us4.asp